15 հուլիսի 2010 թվականի N 888 - Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 453-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 12-ի «Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոց-ների տրամադրման կարգը, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնի-կական և այլ օժանդակ միջոցների օգտագործման ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1780-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 453-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) որոշման N 2 հավելվածում՝

ա. 1-ին կետի 1-ին ենթակետը «երեք տարի» բառերից հետո լրացնել «, երեխաներին՝ մեկ տարի» բառերով,

բ. 1-ին կետի 2-րդ ենթակետը «չորս տարի» բառերից հետո լրացնել «,երեխաներին՝ երկու տարի» բառերով,

գ. 4-րդ կետը «երկու տարի» բառերից հետո լրացնել «, երեխաներին՝ վեց ամիս - մեկ տարի» բառերով,

դ. 7-րդ կետի 3-րդ ենթակետը «մեկ տարի» բառերից հետո լրացնել «, երեխաներին՝ վեց ամիս» բառերով,

ե. 7-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

§

| | | |
|---|---|---|
| 5. | ԱՊՀ երկրների արտադրության լսողական սարքեր | երեք տարի |

¦,

զ. 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին ենթակետով.

§

| | | |
|---|---|---|
| 5.1. | Եվրոպական արտադրության լսողական սարքեր | հինգ տարի |

¦:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել բուժատեխնիկական հանձնաժողովի կազմը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. հուլիսի
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հուլիսի 15-ի N 888 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2007 թվականի
ապրիլի 12 -ի N 453 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

## Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են պրոթեզաօրթոպեդիկ պարագաների« վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների (այսուհետ՝ պարագաներ) տրամադրման հետ կապված հարաբերությունները։

2. Հաշմանդամներին« ինչպես նաև սույն կարգի 4-րդ կետում նշված անձանց պարագաները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին։

3. Հաշմանդամներին պարագաները (բացառությամբ ձեռնափայտի) առաջին անգամ տրամադրվում են հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագրին համա-պատասխան։ Վերականգնողական անհատական ծրագրի կազմման կամ փոփոխման անհրաժեշտության դեպքում հաշմանդամները դիմում են բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմին։

4. Պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, բացառությամբ սույն կարգի 5-րդ կետում նշվածների և լսողական սարքերի, տրամադրվում են նաև ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող (այսուհետ՝ սոցիալապես անապահով)

անձանց, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին և նրանց հավասարեցված անձանց, Հայրենական մեծ պատերազմում զոհվածների այրիներին, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին, մինչև 18 տարեկան երեխաներին՝ անձի բնակության վայրն սպասարկող բժշկական կազմակերպության կողմից տրված գրավոր եզրակացության հիման վրա։

5. Վերին և ստորին վերջույթների պրոթեզները, օրթեզները, ձայնաստեղծ սարքերը, աչքի պրոթեզները, սայլակները և քայլակները տրամադրվում են միայն հաշմանդամություն ունեցող անձանց։

6. Պարագաները տրամադրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն)։

7. Պարագաների հերթական տրամադրման համար եզրակացությունը տալիս է կազմակերպության բժիշկը կամ համապատասխան մասնագետը, իսկ խնդրահարույց դեպքերում՝ բուժատեխնիկական հանձնաժողովը։

8. Երեխաներին օրթեզներ և կորսետներ կարող են տրամադրվել նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից սահմանված կարգով։

9. Տրամադրված պարագաները վերանորոգում է կազմակերպությունը։ Վերանորոգումը կատարվում է պարագայի երաշխիքային ժամկետի լրանալուց հետո, ըստ անհրաժեշտության, կազմակերպության մասնագետի եզրակացությամբ և հիմնավորմամբ, երաշխիքային ժամկետում՝ կազմակերպության միջոցների հաշվին, իսկ երաշխիքային ժամկետի լրանալուց հետո՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին։

10. Պարագաները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 12-ի N 453-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված պրոթեզաօրթոպեդիկ պարագաների« վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների օգտագործման ժամկետներին համապատասխան։

11. Հաշմանդամների վերին և ստորին վերջույթների առաջին անգամ պրոթեզավորումը և օրթեզավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից ստեղծված բուժատեխնիկական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գրավոր եզրակացության հիման վրա։ Հանձնաժողովը եզրակացություն է տալիս նաև սահմանված ժամկետից շուտ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման անհրաժեշտության դեպքերում։

## II. ՊՐՈԹԵԶՆԵՐԻ ԵՎ ՕՐԹԵԶՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

12. Առաջին անգամ ստորին վերջույթի պրոթեզավորման դեպքում, մինչև հիմնական պրոթեզի պատրաստումը« հաշմանդամի համար պատրաստվում և տրամադրվում է բուժամարզական պրոթեզ։ Բուժամարզական պրոթեզը փոխարինվում է հիմնական պրոթեզով, երբ անդամահատված ծայրատի անատոմիական փոփոխությամբ պայմանավորված այն հնարավոր չէ օգտագործել։

13. Վերին վերջույթի պրոթեզի կարիք ունեցող հաշմանդամին չորս տարվա ընթացքում տրամադրվում են մեկ կոսմետիկ պրոթեզ և մեկ շարժողական պրոթեզ (ձգողական կամ բիոպրոթեզ)։

14. Վերին կամ ստորին վերջույթի պրոթեզ կրող հաշմանդամին, անկախ նոր պրոթեզ տրամադրելու ժամկետից, յուրաքանչյուր տարի տրամադրվում է ծայրատի երեք ձեռնոց կամ գուլպա։

15. Հաշմանդամ և սոցիալապես անապահով կանանց, բժշկի եզրակացության հիման վրա, տրամադրվում է կրծքագեղձի պրոթեզ։

## III. ՕՐԹՈՊԵԴԻԿ ԿՈՇԻԿՆԵՐԻ ԵՎ ՊՐՈԹԵԶԻ ԿՈՇԻԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

16. Հաշմանդամներին և սոցիալապես անապահով անձանց յուրաքանչյուր տարի տրամադրվում է երկու զույգ օրթոպեդիկ կոշիկ, մեկ զույգ՝ առանց տաքացված տակդիրների և մեկ զույգ՝ կիսաճիտք կամ երկարաճիտք։ Ելնելով հիվանդության առանձնահատկությունից՝ կարող են տրամադրվել տարեկան միայն երկու զույգ կիսաճիտք օրթոպեդիկ կոշիկներ։ Պրոթեզավորված և օրթեզավորված հաշմանդամներին յուրաքանչյուր տարի տրվում է երկու զույգ պրոթեզի (օրթեզի) կոշիկ, մեկ զույգ՝ առանց տաքացված տակդիրների, և մեկ զույգ՝ կիսաճիտք կամ երկարաճիտք։

17. Վերին երկու վերջույթների ծայրատներով, ինչպես նաև մեկ ձեռքի ծայրատով, մյուս ձեռքի դաստակի ձևախեղումով հաշմանդամներին անվճար տրվում է կոշիկ՝ կողային ռետինե ժապավեններով։

## IV. ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

18. Առաջին խմբի հաշմանդամներին և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաներին, վերականգնողական անհատական ծրագրին համապատասխան, տրամադրվում է հաշման-դամի սայլակ։ Նկատի ունենալով հաշմանդամի առողջական վիճակը՝ սայլակը կարող է ստանալ նրա հարազատներից որևէ մեկը, ով սույն կարգով նախատեսված փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև իր անձնագիրը։

19. Ստորին վերջույթների ազդրային հատվածների երկկողմանի անդամահատումից հետո, սայլակ ստացած հաշմանդամին, անհրաժեշտության դեպքում տրամադրվում է նաև փոքր տրամաչափի սայլակ։

20. Լսողական սարքերը տրամադրվում են հաշմանդամներին, տարիքային կենսա-թոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց և մինչև 18 տարեկան երեխաներին՝ սուրդոլոգի եզրակացության հիման վրա։

21. Ելնելով անձի առողջական վիճակից, տարիքից և ծայրատի ձևից՝ կազմակերպության բժշկի կամ համապատասխան մասնագետի եզրակացությամբ, անձը կարող է ստանալ 1 կամ 2 արմնկային կամ 1 կամ 2 թևատակի հենակ, կամ 1 ձեռնափայտ և 1 հենակ կամ 2 ձեռնափայտ։

22. Ձեռնափայտը տրամադրվում է կազմակերպության մասնագետի եզրակացությամբ։

## V. ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

23. Հաշմանդամները և սույն կարգի 4-րդ կետում նշված անձինք, պարագաներ ստանալու համար, դիմում են կազմակերպություն՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ (մինչև 16 տարեկան երեխաների համար նրանց ծնողներից մեկը կամ այլ օրինական ներկայացուցիչը ներկայացնում է իր անձը հաստատող փաստաթուղթը և երեխայի ծննդյան վկայականը), հաշմանդամները ներկայացնում են հաշմանդամության վկայականը, վերականգնողական անհատական ծրագիրը, սույն կարգի 4-րդ կետում նշված անձինք՝ համապատասխան կարգավիճակը հավաստող փաստաթուղթ և բժշկական եզրակացություն։ Լսողական սարք ստանալու համար կազմակերպություն է ներկայացվում նաև սուրդոլոգի եզրակացությունը, իսկ ձայնալարերի և աչքի պրոթեզավորման համար՝ համապատասխան մասնագիտացված բժշկական կազմակերպության եզրակացությունը։

24. Կազմակերպությունում պարագաներ ստացող անձանց համար լրացվում է անձնական քարտ, որտեղ նշվում են ստացողի ազգանունը« անունը« հայրանունը, բնակության վայրը« ծննդյան տարեթիվը« հիվանդության ախտորոշումը« պարագաների անվանումները« տրամադրման ամսաթիվը« սոցիալական կարգավիճակը։ Հաշմանդամի փոխարեն սայլակ ստանալու դեպքում քարտում նշվում են նաև ստացողի անունը, հայրանունը, բնակության վայրը« անձնագրի սերիան և համարը։

25. Պարագան ստացող անձը կազմակերպությունից պարագաներ ստանալիս՝ ստորագրում է անձնական քարտում։

26. Անձնական քարտը պահպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

27. Կազմակերպությունը պարտավոր է անձի խնդրանքով նրան տրամադրել քաղվածք անձնական քարտից։

28. Կազմակերպությունը մատուցված ծառայության վերաբերյալ հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագրում կատարում է համապատասխան նշում, որը վավերացվում է կազմակերպության դրոշմակնիքով։

29. Պարագաները կազմակերպության կողմից հաշմանդամին տրամադրվում են անհատական հարմարեցումից և հաշմանդամին օգտագործման ձևը սովորեցնելուց հետո։

30. Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը« Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով« ընտրված տեղեկատվական բազա շահագործող կազմակերպություն է ներկայացնում տեղեկատվություն նախորդ ամսվա ընթացքում վերականգնողական անհատական ծրագրով նախատեսված պարագաների կարիք ունեցող հաշմանդամների մասին։

31. Կազմակերպությունը մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում պարագաներ ստացած (վերանորոգած) հաշմանդամների մասին հաշվետվություն։

32. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը ընտրված տեղեկատվական բազա շահագործող կազմակերպություն է ներկայացնում տեղեկատվություն նախորդ ամսվա ընթացքում պարագաներ ստացած անձանց մասին։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ